Հաստատված է
Սևաթերդ համայնքի ավագանու
2017թ. սեպտեմբերի 14-ի N 15-Ն որոշման

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագիր:
2. Աճուրդի մասնակիցները աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար պահանջվող լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով:
3. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 օր առաջ:
4. Աճուրդին մասնակցում են միայն հայտ ներկայացրած անձինք, կազմակերպիչը և արձանագրողը:
5. Աճուրդը սկսվելու պահից դահլիճ մուտք գործելը արգելվում է:
6. Աճուրդը համարվում է սկսված եթե մասնակիցների թիվը տվյալ լոտի համար մեկից ավելի է:
7. Աճուրդի մասնակցության մուտքի արժեքը սահմանել 3000 դրամ:
8. Աճուրդի մեկ քայլի արժեքը սահմանել 12500 դրամ:
9. Առաջին անգամ աճուրդը չկայանալու դեպքում կրկնաճուրդը գյուղ. նշանակության հողերի համար կանցկացվի 7 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բնակավայրերի հողերի համար մեկ ամսվա ընթացքում:
10. Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
11. Եթե աճուրդը չի կայանում երկրորդ անգամ, ապա տվյալ հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքի ձևով սահմանված մեկնարկային գնով:
12. Աճուրդը համարվում է չկայացած եթե ներկայացվել է մասնկացության մեկ հայտ, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է օտարման պայմանագիր կնքելուց:
13. Աճուրդում հաղթած և հողամասը գնելուց հրաժարված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում և նա զրկվում է տվյալ հողամասը ուղղակի վաճառքով գնելու իրավունքից:
14. Աճուրդի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:
15. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը, եթե նշված ժամկետում սգինը չի վճարում, ապա հաղթող է ճանաչվում սակարկության ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը, որը նույնպես պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:
16. Գումարը ամբողջությամբ վճարելուց հետո երկու օրվա ընթացքում կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:
17. Նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը ամբողջությամբ կատարվում են գնորդի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՎԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սևաբերդ համայնք
1 ին փողոց 3 րդ վարչական շենք, հեռ. 093 75 77 52
էլ. փոստ sevaberd@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>>սեպտեմբերի 2017-թվականի N 17-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 -րդ հոդվածի 5-րդ մասով.

Համայնքի ավագանին ո ր ո շ ում է

Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի <<Սևաբերդ համայնքի 2017-թվականի բյուջեի քննարկման և հաստատման մասին>> թիվ 29-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. 04 բաժին, 9 խումբ,1դաս 8411 /հողի օտարումից եկամուտներ/ հոդվածի <<0,0>> թիվը փոխել <<457,0>>թվով:
2. 01 բաժին, 1խումբ, 1 դաս, 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածի <<1000,0>> թիվը փոխել <<0,0>> թվով:
3. 01բաժին, 1 խումբ, 1 դաս, 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածի <<181,1>>թիվը փոխել <<0,0>>թվով:
4. 06 բաժին, 4 խումբ, 1 դաս, 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածի <<0,0>> թիվը փոխել <<1400,0>> թվով:
5. 06 բաժին, 4 խումբ, 1 դաս, 5134 /Նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածի <<0,0>> թիվը փոխել <<238,1>> թվով:

Ավագանու անդամներ՝

Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ավդալյան Տիտալ		
Բաբայան Կարո		
Սարգսյան Սահակ		
Մանուկյան Գեղամ		
Սիմոնյան Արսեն		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՎԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սևաբերդ համայնք
1-ին փողոց 3-րդ վարչական շենք, հեռ. 093-75-77-52
էլ. փոստ sevaberd@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14»սեպտեմբերի 2017 թվականի N 16- Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ԱՐՈՏՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջները.

Համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ աճուրդ վաճառքի եղանակով օտարել.

Լոտ. 1 հողամասի գտնվելու վայրը՝ մարզ Կոտայք, համայնք Ակունք, գյուղ Սևաբերդ, կադաստրային ծածկագիրը՝07-061-0129-0016, մակերեսի չափը՝ 0.3 հա, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտ, կարգը՝ 5-րդ, մեկնարկային գինը՝ սահմանել կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով՝ 20250 ՀՀ դրամ:

Լոտ. 2 հողամասի գտնվելու վայրը՝ մարզ Կոտայք, համայնք Ակունք, գյուղ Սևաբերդ, կադաստրային ծածկագիրը՝07-061-134-001, մակերեսի չափը՝ 4 հա, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ սահմանել կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով՝ 270000 ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ավդալյան Տիտալ		
Բաբայան Կարո		
Սարգսյան Սահակ		
Մանուկյան Գեղամ		
Սիմոնյան Արսեն		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՎԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սևաբերդ համայնք
1-ին փողոց 3-րդ վարչական շենք, հեռ. 093-75-77-52
էլ. փոստ sevaberd@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14»սեպտեմբերի 2017 թվականի N 15 - Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջները.

Համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է

Հաստատել աճուրդային հանձնաժողովի աճուրդի անցկացման կարգը ամբողջությամբ՝ համաձայն հավելվածի

Ավագանու անդամներ՝

Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ավդալյան Տիտալ		
Բաբայան Կարո		
Սարգսյան Սահակ		
Մանուկյան Գեղամ		
Սիմոնյան Արսեն		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՎԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սևաբերդ համայնք
1-ին փողոց 3-րդ վարչական շենք, հեռ. 093-75-77-52
էլ. փոստ sevaberd@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» սեպտեմբերի 2017 թվականի N 14- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՎԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 05 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջը.

Համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 05 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդ վաճառքի անցկացման կարգը հաստատելու մսաին
2.Համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդային եղանակով օտարելու մասին
3.Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 29-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ավդալյան Տիտալ		
Բաբայան Կարո		
Սարգսյան Սահակ		
Մանուկյան Գեղամ		
Սիմոնյան Արսեն		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԲԱՅԱՆ